

Համարը N 156-Ն
Տիպը Հրաման
Սկզբնաղբյուրը ՀՀԳՏ 2005.07.08/17(194)
Հոդ. 199

Ընդունող մարմինը Քաղաքաշինության նախարար
Ստորագրող մարմինը Քաղաքաշինության նախարար
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 18.07.2005

Տեսակը Մայր
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան

Ընդունման ամսաթիվը 21.12.2004
Ստորագրման ամսաթիվը 21.12.2004
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ ՀՀՇՆ II-8.03-96 (ՄՄՆ-2.04-05-95) «ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գրանցված է»
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
13 հունիսի 2005 թ.
Պետական գրանցման թիվ 11705210

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

21 դեկտեմբերի 2004 թ.
ք. Երևան

N 156-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀՀՇՆ II-8.03-96 (ՄՄՆ-2.04-05-95) «ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 101 հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի փետրվարի 20-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությանը քաղաքաշինության բնագավառում կառավարման պետական լիազորված մարմնի իրավասություն վերապահելու մասին» թիվ 156-Ն որոշման համաձայն

Հրամայում եմ՝

Հաստատել ՀՀՇՆ II-8.03-96 (ՄՄՆ 2.04-05-95) «Արհեստական և բնական լուսավորում» շինարարական նորմերում կատարված փոփոխություններն ու լրացումները՝ համաձայն հավելվածի:

Նախարար՝

Ա. Հարությունյան

Հավելված
ՀՀ քաղաքաշինության նախարարի
2004 թվականի դեկտեմբերի 21-ի
156-Ն հրամանի

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ՀՀՇՆ II-8.03-96 (ՄՄՆ 2.04-05-95) «ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ

Գործարկման թվականը _____

1) 3.1 կետը լրացնել նոր պարբերություններով հետևյալ բովանդակությամբ.

«Մեկ աստիճանով տարբերվող մակերևույթի պայծառության նորմավորված արժեքները կր/մ² պետք է ընդունել ըստ սանդղակի. 0,2, 0,3, 0,4, 0,6, 0,8, 1, 2, 3, 5, 8, 10, 12, 15, 20, 25, 30, 50, 75, 100, 125, 150, 200, 400, 500, 750, 1000, 1500, 2000, 2500:

Բնական լուսավորման համար սույն նորմերում բերված են բնական լուսավորվածության գործակիցների արժեքները (ԲԼԳ):»:

2) Աղյուսակ 1-ի ծանոթություն 9-ում «մինուս 27°C» բառերը փոխարինել «մինուս 28°C» բառերով:

3) 3.3-րդ կետի աղյուսակ 3-ի 5-րդ կետում «Բնակավայրեր».

ա) սյունակ 2-ում «տրանսպորտային թունելներ» բառերը խմբագրել նույն սյունակի առանձին տողով և սյունակ 3-ում համապատասխան տողի դիմաց նշել գծիկով,

բ) սյունակներ 4-ում և 5-ում համապատասխանաբար լրացնել 1,7/ 2 թվերը,

գ) 3-րդ աղյուսակի ծանոթությունը լրացնել 4-րդ կետով հետևյալ բովանդակությամբ. «4 պաշարի գործակցի արժեքները և մաքրումների քանակը սյունակ 2-ում ցույց տրված տրանսպորտային թունելների համար բերված են միայն Դ հավելվածի աղյուսակ 1-ի կոնստրուկտիվ լուսատեխնիկական IV սխեմայի լուսատուների օգտագործման հաշվառմամբ:»:

4) 4.1 կետում «և կիսանկուղային» բառերը հանել:

5) Ուժը կորցրած ճանաչել 4.2 կետի երկրորդ, երրորդ, չորրորդ և հինգերորդ պարբերությունները:

6) 4.4 -րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4.4 Ցանկացած նշանակության սենքերի երկկողմանի կողային լուսավորման դեպքում ԲԼԳ-ի արժեքը պետք է ապահովված լինի սենքի կենտրոնում բնորոշ հատվածքի ուղղաձիգ հարթության և աշխատանքային մակերևույթի փոխհատման հաշվարկային կետում:

Բնակելի և հասարակական շենքերում միակողմանի կողային լուսավորման դեպքում.

ա) Բնակելի շենքերում բնակելի սենքերի ԲԼԳ-ի նորմավորվող արժեքը պետք է ապահովված լինի սենքի բնորոշ հատվածքի ուղղաձիգ հարթության և լուսային բացվածքներից առավել հեռացած պատից 1 մ հեռավորության վրա հատակի հարթության փոխհատման վրա դասավորված հաշվարկային կետում մեկ սենյակում, երկու և երեք սենյականոց բնակարանների համար և երկու սենյակում չորս և ավելի սենյականոց բնակարանների համար:

Բազմասենյակ բնակարանների մնացած բնակելի սենքերում և խոհանոցում ԲԼԳ-ի նորմավորվող արժեքը կողային լուսավորման դեպքում պետք է ապահովվի սենքի կենտրոնում հատակի հարթության վրա դասավորված հաշվարկային կետում:

բ) Հանրակացարանների սենքերի, հյուրասենյակների և հյուրանոցների համարների ԲԼԳ-ի նորմավորվող արժեքը պետք է ապահովված լինի սենքի բնորոշ հատվածքի ուղղաձիգ հարթության և լուսային բացվածքներից առավել հեռացած պատից 1 մ հեռավորության վրա հատակի հարթության փոխհատման վրա դասավորված հաշվարկային կետում:

գ) Մանկապարտեզների խմբային և խաղային սենքերում հիվանդացած երեխաների համար նախատեսված սենյակներում սենքի բնորոշ հատվածքի ուղղաձիգ հարթության և լուսային բացվածքներից առավել հեռացած պատից 1 մ հեռավորության վրա հատակի հարթության փոխհատման վրա դասավորված հաշվարկային կետում:

դ) Հանրակրթական դպրոցների, արհեստագործական ուսումնարանների և քոլեջների ուսումնական և ուսումնաարտադրական սենքերում սենքի բնորոշ հատվածքի ուղղաձիգ հարթության և լուսային բացվածքներից առավել հեռացած պատից 1,2 մ հեռավորության վրա պայմանական աշխատանքային մակերևույթի փոխհատման վրա դասավորված հաշվարկային կետում:

ե) Առողջապահական հիմնարկների հիվանդասենյակներում, առողջարանների և հանգստյան տների հիվանդասենյակներում ու ննջասենյակներում սենքի բնորոշ հատվածքի ուղղաձիգ հարթության և լուսային բացվածքներից առավել հեռացած պատից 1 մ հեռավորության վրա հատակի հարթության փոխհատման վրա դասավորված հաշվարկային կետում:

զ) Հիվանդների ընդունումը վարող բժիշկների առանձնասենյակներում, դիտման, ընդունման-դիտման բոքսերում, վիրակապարաններում սենքի բնորոշ հատվածքի ուղղաձիգ հարթության և լուսային բացվածքներից առավել հեռացած պատից 1 մ հեռավորության վրա պայմանական աշխատանքային մակերևույթի փոխհատման վրա դասավորված հաշվարկային կետում:

է) Բնակելի և հասարակական շենքերի մնացած սենքերում սենքի կենտրոնում աշխատանքային մակերևույթի վրա դասավորված հաշվարկային կետում:

Քաղաքների զարգացման գլխավոր հատակագծերով որոշված կենտրոնական, պատմական գոտիներում՝ բոլոր սենքերում, բացառությամբ սույն կետի գ), դ) և ե) ենթակետերում ցույց տրված սենքերից, ԲԼԳ-ի նորմավորվող արժեքը պետք է ապահովված լինի սենքի կենտրոնում աշխատանքային մակերևույթի վրա:»:

7) 4.5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4.5 Մինչև 6,0 մ խորությամբ արտադրական սենքերում միակողմանի կողային լուսավորման դեպքում նորմավորվում է ԲԼԳ-ի նվազագույն արժեքը սենքի բնորոշ հատվածքի ուղղաձիգ հարթության և պատից կամ լուսային բացվածքներից առավել հեռացած գոտու առավելագույն խորացած գծից 1,0 մ հեռավորության վրա պայմանական աշխատանքային մակերևույթի փոխհատման վրա դասավորված կետում:

Արտադրական խոշորագրաչափք մինչև 6,0 մ խորությամբ սենքերում կողային լուսավորման դեպքում նորմավորվում է ԲԼԳ-ի նվազագույն արժեքը լուսային պայմանական աշխատանքային մակերևույթի վրա կետում՝

հեռացած լուսային բացվածքներից.

ա) հատակից մինչև լուսաբացվածքների գագաթը 1,5 բարձրությամբ՝ I-IV կարգի տեսողական աշխատանքների համար,

բ) հատակից մինչև լուսաբացվածքների գագաթը 2,0 բարձրությամբ՝ V-VII կարգի տեսողական աշխատանքների համար,

գ) հատակից մինչև լուսաբացվածքների գագաթը 3,0 բարձրությամբ VIII կարգի տեսողական աշխատանքների համար:»:

8) 4.6 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**4.6** Ցանկացած նշանակության սենքերի վերին կամ համակցված բնական լուսավորության դեպքում նորմավորվում է ԲԼԳ-ի միջին արժեքը սենքի բնորոշ հատվածքի ուղղաձիգ հարթության և պայմանական աշխատանքային մակերևույթի (կամ հատակի) փոխհատման վրա դասավորված կետերում: Առաջին և վերջին կետերն ընդունվում են պատերի (միջնորմների) մակերևույթներից կամ սյուների առանցքներից 1,0 մ հեռավորության վրա:»:

9) 4-րդ բաժինը լրացնել 4.7-4.13 կետերով՝ հետևյալ խմբագրությամբ.

«**4.7** Թույլատրվում է սենքերի բաժանումը կողային լուսավորմամբ (պատուհաններով արտաքին պատերին հարող գոտիներ) գոտիների և վերին լուսավորմամբ գոտիների: Յուրաքանչյուր գոտում բնական լուսավորման նորմավորումը և հաշվարկը կատարվում է իրարից անկախ:

4.8 I-III կարգի տեսողական աշխատանքներով արտադրական սենքերում պետք է կիրառել համատեղված լուսավորում: Թույլատրվում է վերին բնական լուսավորության խոշորաթիչք հավաքման արտադրամասերում, որոնցում աշխատանքները կատարվում են հատակի տարբեր մակարդակների վրա սենքի ծավալի զգալի մասում և տարածության մեջ կողմնորոշված տարբեր աշխատանքային մակերևույթների վրա: Կիրառվում են ԲԼԳ-ի նորմավորված արժեքները I -III կարգերի համար, համապատասխանաբար 10, 7, 5%:

4.9 Սենքերի բնական լուսավորման հաշվարկը կատարվում է առանց հաշվի առնելու կահույքը, կանաչապատման սարքավորանքը և այլ ստվերարկող առարկաները, ինչպես նաև լուսաբացվածքներում լուսաթափանցիկ լցվածքները 100% օգտագործման դեպքում:

Թույլատրվում է ԲԼԳ-ի հաշվարկային արժեքի e_n իջեցում նորմավորվող ԲԼԳ-ի e_n կատմամբ ոչ ավելի, քան 10%:

4.10 Սենքի ներսի մակերևույթների արտացոլման գործակցի միջին կշռային գործակցի հաշվարկային արժեքները պետք է ընդունել հավասար 0,50 բնակելի և հասարակական սենքերում և 0,40 - արտադրական սենքերում:

4.11 Կառուցապատման պայմաններում սենքերի բնական լուսավորությունը հաշվարկելիս դիմակա շենքերի ձակատների համար, առանց ձակատի ապակեպատ բացվածքների, շինարարական և երեսապատման նյութերի անդրադարձման գործակիցը P_a պետք է ընդունել:

ա) կառուցվող շենքերի համար ըստ ձակատի երեսապատման նյութերի սերտիֆիկացման բերված տվյալների, կամ ըստ չափման տվյալների.

բ) գոյություն ունեցող կառուցապատման համար՝ ըստ 21 աղյուսակի:

ձակատի ապակեպատ բացվածքների անդրադարձման միջին կշռային $P_{աբ}$ գործակիցը, հաշվի առնելով ապակեկալները, հաշվարկներում ընդունվում է հավասար 0,2:

ձակատի անդրադարձման միջին կշռային P_a գործակիցը, հաշվի առնելով ապակեպատ բացվածքները, պետք է հաշվարկել ըստ բանաձևի.

$$P_a = \frac{P_a S_a + P_{աբ} S_{աբ}}{S_a + S_{աբ}}, \tag{2}$$

որտեղ P_a , $P_{աբ}$ - համապատասխանաբար ձակատի երեսապատման նյութի հաշվի առած և ապակեկալները ձակատի ապակեպատ բացվածքների անդրադարձման գործակիցներն են,

S_a , $S_{աբ}$ - համապատասխանաբար առանց լուսաբացվածքների ձակատի և լուսաբացվածքների մակերեսներն են:

4.12 Ընդհանուր տարրական և միջին մասնագիտական կրթության ուսումնական սենքերում անկախ լուսավորման տիպից պետք է սովորողների աշխատանքային տեղերը դասավորել այնպես, որպեսզի բնական լուսավորման լույսը, որպես կանոն, ընկնի նրանց վրա ձախ կողմից:

4.13 Վերին և համակցված լուսավորմամբ արտադրական և հասարակական շենքերի բնական լուսավորման անհավասարաչափությունը չպետք է գերազանցի 3:1: ԲԼԳ-ի արժեքը վերին և համակցված բնական լուսավորման դեպքում պայմանական աշխատանքային մակերևույթի և բնորոշ ուղղաձիգ հարթության հատվածքի փոխհատման գծի ցանկացած կետում պետք է լինի ոչ պակաս համապատասխան կարգերի աշխատանքների համար կողային լուսավորման դեպքում ԲԼԳ-ի նորմավորվող արժեքից:

Բնական լուսավորման անհավասարաչափությունը կողային լուսավորմամբ սենքերի դեպքում, չի նորմավորվում արտադրական սենքերի համար, որոնցում կատարվում են VII և VIII կարգերի աշխատանքներ, օժանդակ սենքերի և հասարակական շենքերի սենքերի վերին և կողային լուսավորման դեպքում, որոնցում կատարվում են Դ և Ե կարգի աշխատանքներ:»:

10) 5.1-րդ կետի վերջին պարբերության «բացառությամբ բնակելի շենքերի բնակելի սենքերի և խոհանոցների, երեխաների կացությամբ սենյակների, ուսումնական հաստատությունների և դպրոցների ուսումնական և ուսումնաարտադրական սենքերի, սանատորիաների և հանգստյան տների ննջասենյակների» բառերը փոխարինել «բացառությամբ տների և հանրակացարանների բնակելի սենյակներից, հյուրասենյակներից և հյուրանոցների

համարներից, առողջարանների և հանգստի տների ննջարանային սենքերից, մանկական նախադպրոցական հիմնարկների խմբային և խաղային սենքերից, բուժպրոֆիլակտիկ հիմնարկների պալատներից» բառերով:

11) 5.3-րդ կետի առաջին պարբերությունում «աղյուսակ 1-ի» բառերից հետո լրացնել «և թ հավելվածի» բառերով:
ա) ենթակետում «մինուս 27°C» բառերը փոխարինել «մինուս 28°C» բառերով:

12) 5.5-րդ կետի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԲԼԳ-ի հաշվարկային արժեքները բնակելի և հասարակական շենքերի համատեղված լուսավորման դեպքում պետք է կազմեն ոչ պակաս աղյուսակ 2-ում նշված արժեքների 60% -ից:»:

13) 5-րդ բաժինը լրացնել 5.6 - 5.9 կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«5.6 Կողային լուսավորմամբ հասարակական շենքերի համատեղված լուսավորման դեպքում սենքերի համար ԲԼԳ-ի նորմավորվող արժեքի 80%-ին հավասար կամ փոքր հաշվարկային արժեքի դեպքում ընդհանուր արհեստական լուսավորումից լուսավորվածությունը պետք է բարձրացնել մեկ աստիճանով՝ ըստ լուսավորվածությունների սանդղակի:

5.7 Բնակելի և հասարակական շենքերի համար արհեստական լուսավորման պահանջները, կախված սենքի նշանակությունից, պետք է ընդունել ըստ հավելված Թ-ի:

5.8 Դպրոցների, դպրոց-ինտերնատների, պրոֆեսիոնալ-տեխնիկական և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսումնական և ուսումնաարտադրական սենքերի համատեղված լուսավորման դեպքում պետք է նախատեսել լուսաբացվածքներին զուգահեռ դասավորված լուսատուների շարքերի առանձին միացում:

5.9 Քաղաքի կենտրոնական մասում և պատմական գոտիներում դասավորված բնակելի և հասարակական շենքերի սենքերը համատեղված լուսավորման դեպքում արհեստական լուսավորումից նորմավորվող լուսավորվածությունը պետք է բարձրացնել մեկ աստիճանով՝ ըստ լուսավորվածության սանդղակի:»:

14. 6.1-րդ կետը լրացնել նոր պարբերություններով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Սենքերի ընդհանուր լուսավորման համար, որպես կանոն, պետք է օգտագործել լույսի պարպիչ աղբյուրներ, տալով առաջնություն հավասար հզորության դեպքում առավելագույն լուսատացքով և ծառայական ժամկետով լույսի աղբյուրներին:

Սենքերի ընդհանուր արհեստական լուսավորման համար լույսի աղբյուրների լուսատացքը գունահաղորդման նվազագույն թույլատրելի ինդեքսի դեպքում չպետք է լինի ավելի փոքր աղյուսակ 5 Ա-ում բերված արժեքներից:

Աղյուսակ 5 Ա

Լույսի աղբյուրի տիպը	Լուսատացքը, լմ/վտ, ոչ պակաս գունահաղորդման նվազագույն թույլատրելի ցուցիչների դեպքում			
	R _w ≥ 80	R _w ≥ 60	R _w ≥ 45	R _w ≥ 25
Լյումինեսցենտային լամպեր	65	75	-	-
Լյումինեսցենտային կոմպակտ լամպեր	70	-	-	-
Մետաղահալոգենային լամպեր	75	90	-	-
Սնդիկային աղեղային լամպեր	-	-	55	-
Բարձր ճնշման նատրիումային լամպեր	-	75	-	100

15) 6.18-րդ կետի 9-րդ աղյուսակի 2-րդ սյունակում «5000» թվերը փոխարինել «6000» թվերով:

16) 6.21-րդ կետի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սենքերի ընդհանուր լուսավորման համար պետք է օգտագործել առավել խնայողական պարպիչ լամպեր՝ ոչ պակաս 55 լմ/վտ լուսատացքով: Ընդհանուր լուսավորման համար թույլատրվում է շիկացման լամպերի օգտագործում միայն ճարտարապետագեղարվեստական պահանջների ապահովման համար և պայթուցանավտանգ սենքերում»,

17) 6.21-րդ կետը լրացնել նոր պարբերություններով՝ հետևյալ խմբագրությամբ.

«Էներգասպառման հսկողության նպատակով սահմանվում են պահանջներ Ա-Գ կարգերի հասարակական շենքերի սենքերի արհեստական լուսավորման առավելագույն թույլատրելի տեսակարար սահմանված հզորությանը:

Ընդհանուր արհեստական լուսավորության տեսակարար սահմանված հզորությունները չպետք է գերազանցեն աղյուսակ 10 Ա-ում բերված առավելագույն թույլատրելի մեծություններից:

Աղյուսակ 10 Ա

Աշխատանքային մակերևույթի վրա լուսավորվածությունը, լք	Սենքի ցուցանիշը	Առավելագույն թույլատրելի տեսակարար սահմանված հզորությունը, Վտ/մ ² , ոչ ավելի
1	2	3

500	0,6	42
	0,8	39
	1,25	35
	2,0	31
	3 և ավելի	28
400	0,6	30
	0,8	28
	1,25	25
	2,0	22
	3 և ավելի	20
300	0,6	25
	0,8	23
	1,25	20
	2,0	18
	3 և ավելի	16
200	0,6-1,25	18
	1,25-3,0	14
	3-ից ավել	12
150	0,6-1,25	15
	1,25-3,0	12
	3-ից ավել	10
100	0,6-1,25	12
	1,25-3,0	10
	3-ից ավել	8

Աղյուսակում արժեքները բերված են գործարկման-կարգավորման սարքվածքների, ինչպես նաև լուսավորման կառավարման սարքվածքների հզորությունների գործածության հաշվառմամբ

18) 6.23-րդ կետի առաջին պարբերությունը «իջեցնել» բառից հետո լրացնել «մեկ աստիճանով» բառերով,

ա) ենթակետից հանել «մեկ աստիճանով» բառերը,

բ) ենթակետից հանել «երկու աստիճանով» բառերը:

19) 6.28-րդ կետի 11-րդ աղյուսակի ծանոթությունները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Արագընթաց ճանապարհների միջին պայծառությունը անկախ տրանսպորտի երթևեկության ինտենսիվությունից ընդունվում է 1,6 կր/մ² քաղաքի սահմանում և ոչ պակաս 1,0 կր/մ²-քաղաքներից դուրս օդանավակայանների, գետային նավահանգիստների հիմնական մուտքերում:

2. Երկու և ավելի մակարդակներում տրանսպորտային փոխհատումների սահմաններում երթևեկելի մասի ծածկույթի միջին պայծառությունը կամ միջին լուսավորվածությունը բոլոր փոխհատվող մայրուղիներում պետք է լինի ինչպես դրանցից հիմնականում, այնպես էլ իջատեղերում և ճյուղավորումներում ոչ պակաս 0,8 կր/մ² կամ 10 լք:

3. Չորսակասալարքից, գրանիտե սալերից և այլ նյութերից ծածկույթով փողոցների, ճանապարհների և երթևեկելի մասի լուսավորման մակարդակը կանոնակարգվում է միջին հորիզոնական լուսավորվածության մեծությամբ՝ ըստ աղյուսակ 11-ի:

4. Արագընթաց ճանապարհներին և մայրուղային փողոցներին հարող տեղական նշանակության փողոցների լուսավորման մակարդակը պետք է լինի հարող գծից ոչ պակաս 100 մ հեռավորության վրա արագընթաց ճանապարհի կամ մայրուղային փողոցի լուսավորման մակարդակի մեկ երրորդից:

5. Փողոցների և 500 միավ/ժ շարժման ինտենսիվությամբ ճանապարհների մեկ մակարդակում երթևեկելի մասով հետիոտն անցումներում պետք է նախատեսել լուսավորման նորմերի բարձրացում 1,3 անգամից ոչ պակաս, համեմատած փոխհատվող երթևեկելի մասի լուսավորման նորմի հետ: Լուսավորման նորմի ավելացումը ձեռք է բերվում հենարանների քայլի փոփոխման, լրացուցիչ կամ ավելի հզոր լուսային սարքերի տեղակայման, անցումների վրա գունագերծված ծածկույթների օգտագործման հաշվին և այլն:»:

20) 6.30-րդ կետի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ծածկույթի նվազագույն պայծառության հարաբերությունը միջին արժեքին պետք է լինի ոչ պակաս 0,4 միջին պայծառության 0,6 կր/մ² ավելի նորմի դեպքում և ոչ պակաս 0,3 - միջին պայծառության 0,6 կր/մ² և ցածր նորմի դեպքում:»:

21) 6.39-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**6.39** 60 մ ավելի երկարությամբ քաղաքային տրանսպորտային թունելների երթևեկելի մասի ճանապարհային ծածկույթի միջին հորիզոնական լուսավորվածությունը պետք է ընդունել ցերեկային ռեժիմում ըստ 16 աղյուսակի, իսկ երեկոյան և գիշերային ռեժիմներում-հավասար 50 լք:

100 մ ավելի երկարությամբ թունելներում ուղեմուտքի ճակատամուտքի վրա վարորդի տեսադաշտում շրջապատող կառուցապատմամբ, բնական բարձրություններով և այլն, ինչպես նաև ժամում 600 տրանսպորտային միավորից պակաս

շարժման ինտենսիվության դեպքում ուղեմուտքում պետք է մեկ աստիճանով ցածրացնել միջին հորիզոնական լուսավորվածության առավելագույն մեծությունը՝ ուղեմուտքի հատվածի մնացած լուսավորվածությունների համամասնական փոքրացմամբ: Թունելների ներսի հատվածի միջին հորիզոնական լուսավորվածությունը հաստատուն է և բոլոր դեպքերում կազմում է 50 լք միակողմանի երթևեկությամբ թունելներում՝ մինչև ելքի ճակատամուտքը, իսկ երկու ուղղություններով երթևեկության դեպքում՝ մուտքային հատվածների երկու վերջավորությունների միջև:

Միակողմանի երթևեկությամբ թունելների մուտքային հատվածում պետք է օգտագործվի «հանդիպակաց լուսավորման» համակարգ, իսկ երկու ուղղությամբ երթևեկությամբ-«համաչափ լուսավորման» համակարգ:

Թունելի մինչև 60 մ երկարության դեպքում միջին հորիզոնական լուսավորվածությունը բոլոր ռեժիմներում պետք է լինի 50 լք:

100 մ ավելի երկարությամբ տրանսպորտային թունելները պետք է սարքավորված լինեն պահեստային ելքերի և դեպի այն շարժման ուղղությունների լուսային ցուցանակներով: Բաց բացվածքներ ունեցող մեկ պատով, որոնք զբաղեցնում են դրա մակերեսի 0,25%-ից ավելին, տրանսպորտային թունելներում, ինչպես նաև անձնական և հասարակական տրանսպորտի եզակի միջոցների համար նախանշանակված տեղական նշանակության թունելներում երթևեկելի մասի ծածկույթի միջին հորիզոնական լուսավորվածությունը ցերեկվա ժամանակ պետք է համապատասխանի աղյուսակ 17-ի պահանջներին:

Աղյուսակ 16

Թունելի երկարությունը, մ	Երթևեկության արագությունը, կմ/ժ	Լուսավորման համակարգը	Երթևեկելի մասի ծածկույթի ուղեմուտքային մուտքաձևակառուցման սկզբից հեռավորության վրա, մ, միջին հորիզոնական լուսավորվածությունը, լք													
			10-30	50	75	100	125	150	175	200	250	300	350	400	450	500 և ավելի
61-100	60	հանդիպակական	500	250	100	50	-	-	-	-	-	-	-	-	-	-
	80	հանդիպակական	600	500	300	100										
	100	հանդիպակական	750	750	500	200										
100-ից ավել	60	հանդիպակական	1250	740	280	160	110	80	60	50	50	50	50	50	50	50
	80	հանդիպակական	1500	1500	1050	600	330	210	160	120	80	50	50	50	50	50
	100	հանդիպակական	2000	2000	2000	1700	1300	940	530	360	195	120	90	80	50	50
	60	համաչափ	2000	1200	500	250	180	120	90	80	50	50	50	50	50	50
	80	համաչափ	2500	2500	1750	1000	530	340	220	180	115	80	65	50	50	50
	100	համաչափ	3000	3000	3000	2550	2000	1400	900	580	300	200	140	110	80	50

Ուղեմուտքային գոտիների հաջորդական տեղամասերի լուսավորման մակարդակի իջեցման ընթացքը համապատասխանում է թունել մտնող վարորդի հարմարվելուն անհրաժեշտ պայմանների ստեղծման պահանջներին:

Աղյուսակ 17

Լուսավորվող օբյեկտներ	Երթևեկելի մասի ծածկույթի միջին հորիզոնական լուսավորվածությունը, լք, ուղեմուտքի ձևակառուցման հեռավորության վրա, մ				
	5	25	50	75	100 և ավելի
Տեղական նշանակության թունել	250	250	150	100	50
Մեկ պատում բացվածքներով թունել	150	150	100	75	50

Հատակագծում 350 մ պակաս շառավղով կորագիծ ուղեգծով ցանկացած տիպի տրանսպորտային թունելներում ուղեմուտքի հատվածում ձևակառուցման հեռավորության վրա ավելի մեծ շառավղով պատի կամ բացվածքներ ունեցող պատի ուղղաձիգ լուսավորվածության մեծությունը երթևեկելի մասի ծածկույթից 2 մ բարձրության վրա պետք է լինի ոչ պակաս հորիզոնական լուսավորվածության 0,5 մեծությունից՝ դրա երեսպատվածքի նյութի գունարային անդրադարձման 0,4-0,6 գործակցի դեպքում և ոչ պակաս հորիզոնական լուսավորվածության 0,8 մեծությունից 0,4-ից պակաս գունարային անդրադարձման գործակցի դեպքում: Թունելի ցանկացած տրամատի դեպքում հորիզոնական հարթությունում ձևակառուցման հեռավորության ոչ պակաս 200 մ երկարության վրա ուղեմուտքային հատվածում պատերի մինչև 2 մ երկարության վրա ուղղաձիգ լուսավորվածության մեծությունը պետք է կազմի երթևեկելի մասի հորիզոնական լուսավորվածության ոչ պակաս 0,5 մեծությունից:

Թույլատրվում է նախատեսել թունելի ուղեմուտքի հատվածի արհեստական լուսավորման ավտոմատ կարգավորում՝ կախված արտաքին բնական լուսավորվածության մակարդակից, սկսած 10000 լք և ավելի ցածրից, ելնելով ուղեմուտքի սկզբում արհեստական լուսավորվածության մեծության բնականին 1:10 հարաբերությունից և ամբողջ ուղեմուտքի հատվածում ըստ 16 և 17 աղյուսակների արհեստական լուսավորման իջեցման պահպանումից:»:

22) 6.41-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**6.41** Տրանսպորտի լցավորման և պահման տեղերի մուտքերում, ինչպես նաև փողոցներում բաց ավտոկայանատեղերում միջին հորիզոնական լուսավորվածության նորմերը պետք է համապատասխանեն աղյուսակ 18-ի պահանջներին:

Աղյուսակ 18

Լուսավորվող օբյեկտներ	Միջին հորիզոնական լուսավորվածություն, լք
Վառելիքալցավորման կետեր և ավտոլցավորման կայաններ	
1 Մուտքի ուղիներ փողոցներից և ճանապարհներից. Ա և Բ կարգերի Գ կարգերի	10 6
2 Նավթամթերքների լցավորման և դատարկման տեղեր	20
3 Երթևեկելի մաս ունեցող մնացած տարածքը	10
Շարժակազմի պահման համար կայանատեղեր, հրապարակներ	
1 Բոլոր կարգերի փողոցներում բաց, ինչպես նաև փողոցներից դուրս վճարովի կայանատեղեր	4
2 Բաց կայանատեղեր միկրոշրջաններում	2
3 Երթանցներ խցավոր տիպի ավտոտնակների միջև	4

23) 6.44 -րդ կետի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Գիշերային ժամերին թույլատրվում է նախատեսել քաղաքային փողոցների, ճանապարհների և հրապարակների արտաքին լուսավորման մակարդակի իջեցում 0,4 կր/մ² ավելի նորմավորվող պայծառության կամ 4 լք ավելի միջին լուսավորվածության դեպքում, կանթեղների ոչ ավելի կեսից անջատման միջոցով, ընդամին բացառելով իրար հետևից դասավորված կամ բարձր ճնշման պարպումային լամպերի լուսային հոսքի արտաքին լուսավորման նորմավորվող մակարդակի մինչև 50%-ից ոչ պակաս մակարդակը տեղակայումով կարգավորիչի օգնությամբ առանց կանթեղների անջատման:»:

24) 6.45-րդ կետի երկրորդ պարբերությունում «ըստ աղյուսակ 10-ի» բառերը փոխարինել «ըստ աղյուսակ 9-ի» բառերով:

25) 6.45-ի երրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ա և Բ արտաքին լուսավորման բոլոր տեսակի կայանքները չպետք է ստեղծեն բնակելի շենքերի պատուհաններում ուղղաձիգ լուսավորվածություն, որը գերազանցում է.

ա) 7 լք՝ երթևեկելի մասի միջին պայծառության 0,4 կր/մ² նորմի դեպքում,

բ) 10 լք՝ 0,6-1,0 կր/մ² նորմի դեպքում,

գ) 20 լք՝ 1,2-1,6 կր/մ² նորմի դեպքում:»:

26) 6.45-րդ կետը լրացնել նոր պարբերությունով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Գ կարգի փողոցներում, հասարակական կենտրոններից դուրս հետիոտն փողոցներում, ներբակային տարածքներում, ինչպես նաև հիվանդանոցների և բուժական-կուրորտային հիմնարկների անջարանային մասնաշենքերին հարող ցանկացած փողոցներում բնակելի շենքերի և անջարանային մասնաշենքերի հիվանդանոցային կենտրոնների վրա ուղղաձիգ լուսավորվածությունը չպետք է գերազանցի 5 լք:»:

27) 6.49-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

6.49 Տրանսպորտային թունելներում պետք է կիրառվեն կանթեղներ 100-ից ոչ պակաս պաշտպանիչ անկյունով: Կանթեղի լույսի ուժը երթևեկելի մասի առանցքին զուգահեռ հարթությունում 750, 800, 850 և 900 անկյան տակ չպետք է գերազանցի համապատասխանաբար 50, 20, 10 և 0 կր 1000 լմ-ի վրա:

Թունելի պատերի վրա կանթեղների դասավորվածության բարձրությունը պետք է լինի 4 մ-ից ոչ պակաս:»:

28) 6.50-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«<Ետիոտն թունելներում պետք է օգտագործվեն կանթեղներ ոչ պակաս 15 պաշտպանիչ անկյունով կամ դիֆուզային և պրիզմատիկ լուսացիրներով.

ա) մինչև 110 վտ հզորությամբ ԴՆԱՏ (ԴՆԱՍ) լամպերով,

բ) 70 վտ հզորությամբ ԴՐԻ լամպերով,

գ) մինչև 125 վտ հզորությամբ ԴՐԼ լամպերով,

դ) մինչև 80 վտ գումարային հզորությամբ լյումինեսցենտային լամպերով,

ե) երկար լուսատարներ մինչև 400 վտ հզորությամբ լամպերով:»:

29) 6-րդ բաժնի «Քաղաքային և գյուղական բնակավայրերի արտաքին լուսավորում» ենթաբաժինը լրացնել 6.51 - 6.55 կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«6.51 Բաց շուկաների և առևտրային տոնավաճառների տարածքներում հրապարակների, տաղավարների, վրանների, բեռնարկղների շարքերի միջև երթանցի, անցումների և այլն միջին հորիզոնական լուսավորվածությունը անկախ դրանց կարգից և զբաղեցրած մակերեսից պետք է լինի ոչ պակաս 10 լք:

Ուղղաձիգ լուսավորվածության հարաբերությունը հորիզոնականին պետք է լինի ոչ պակաս 1:2: Ընդ որում, ուղղաձիգ լուսավորվածությունը որոշվում է երթանցի առանցքին ուղղահայաց լայնական հարթության մեջ, 1,5 մ բարձրության վրա, հորիզոնական լուսավորվածությունը՝ ծածկույթի մակարդակում:

Շուկան կամ առևտրային տոնավաճառը փակելուց հետո թույլատրվում է իջեցնել միջին հորիզոնական լուսավորվածության մակարդակը մինչև 4 լք: Ընդ որում, նվազագույն լուսավորվածությունը չպետք է լինի 2 լք-ից պակաս:

6.52 Արտաքին լուսավորման նախագծերում պետք է նախատեսել դեպի հակահրդեհային ջրաղբյուրները մուտքերի լուսավորում, եթե դրանք դասավորված են անցուղիների չլուսավորված մասերում: Այդ մուտքերի միջին հորիզոնական լուսավորվածությունը պետք է լինի 2 լք:

6.53 Փողոցներին և տրանսպորտային երթևեկությամբ ճանապարհներին հարող ավտուղցավորման կայանների և կանգառների տարածքներում ցրված լույսի կանթեղները պետք է տեղակայվեն 3 մ ոչ պակաս բարձրության վրա՝ լամպերի մինչև 6,000 լմ. լուսային հոսքի դեպքում և ոչ պակաս 4մ-ից՝ 6,000 լմ-ից ավելի լուսային հոսքի դեպքում: Ցույց տրված օբյեկտների լուսավորվածության համար չի թույլատրվում կիրառել տանիքների և շվաքարանների վրա դասավորված ու դեպի փողոցի և ճանապարհի կողմն ուղղված լուսարձակներ:

6.54 Խոշոր հրապարակների և տրանսպորտային ուղեբաժանքների, այդ թվում նաև մի քանի մակարդակներում, լուսավորման համար 20 մ և ավելի բարձրությամբ հենարանների օգտագործման դեպքում դրանց վրա տեղակայվող լուսային սարքերը պետք է ունենան ուղղաձիգի նկատմամբ ոչ ավելի 650 անկյան տակ լույսի առավելագույն ուժը: Տրանսպորտային փոխհատման վերին մակարդակի երթևեկելի մասի ճանապարհային ծածկույթի վրա կանթեղների բարձրությունը պետք է լինի ոչ պակաս 10 մ-ից: շ

6.55 Դեպի շենքը յուրաքանչյուր մուտքի վրա կամ դրա կողքին պետք է տեղակայված լինեն միջին հորիզոնական լուսավորվածության մակարդակներն ապահովող կանթեղներ, ոչ պակաս.

- ա) հիմնական մուտքի հարթակի վրա-6 լք,
- բ) պահեստային կամ տեխնիկական մուտքի-4 լք,
- գ) դեպի շենքը հիմնական մուտքի մոտ 4 մ երկարությամբ հետիոտն ուղու վրա-4 լք:»:

30) Աղյուսակ 19-ը հանել:

31) «Ճարտարապետական, ցուցափեղկային և գովազդային լուսավորում» ենթաբաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Շենքերի և կառուցվածքների արտաքին ճարտարապետական լուսավորում

6.56 Արտաքին ճարտարապետական լուսավորումը պետք է ապահովի երեկոյան ժամերին առավել կարևոր օբյեկտների լավ տեսանելիությունն ու արտահայտվածությունը և բարձրացնի քաղաքի լուսային միջավայրի բարեհարմարությունը: Ճարտարապետական լուսավորման կայանքները չպետք է առաջացնեն կուրացնող ազդեցություն տրանսպորտի վարորդների և հետիոտնի վրա:

6.57 Շենքերի, կառուցվածքների, կոթողների ձակատների և բնապատկերային ճարտարապետության տարրերի պայծառությունը, կախված դրանց նշանակալիությունից, դասավորության տեղից և քաղաքում դրանց տեսանելի ընկալման գերակշռող պայմաններից, պետք է ընդունել ըստ աղյուսակ 20-ի:

Աղյուսակ 20 -Քաղաքային օբյեկտների արտաքին ճարտարապետական լուսավորման նորմերը

Քաղաքային տարածության կարգը	Լուսավորման օբյեկտի դասավորման տեղը	Լուսավորվող օբյեկտը	Ողողող լուսավորում, ձակատի միջին պայծառությունը, Lձ, L, կղ/մ ²	Ողողող և շեշտադրող լուսավորում, լույսով շեշտադրվող տարրի միջին պայծառությունը, Lտ, կղ/մ ²	Տեղական լուսավորում, միջին պայծառությունը, L, կղ/մ ²
Ա	Մայրաքաղաքի կենտրոնի հրապարակներ, ընդհանուր քաղաքային գերիշխող գոտիներ	Ազգային նշանակության ճարտարապետության հուշարձաններ, խոշոր հասարակական շենքեր, կոթողներ և գերիշխող օբյեկտներ	10	30	10
	Մայրուղային փողոցներ և համաշխարհային նշանակության հրապարակներ	Ճարտարապետության, պատմության և մշակույթի հուշարձաններ, քաղաքային նշանակության շենքեր, կառուցվածքներ և կոթողներ	8	25	8
	Համաքաղաքային նշանակության գրասպառններ,	Տեսարժան շենքեր, կառուցվածքներ, հուշարձաններ և կոթողներ.	5	15	5

	պարտեզներ, զբոսավայրեր, պուրակներ և հետիոտն փողոցներ	բնապատկերի եզակի տարրեր			
Բ	Մարզային և համայնքային հասարակական կենտրոնների հրապարակներ	Մարզային և համայնքային նշանակության հուշարձաններ և կոթողներ, շենքեր և կառուցվածքներ	7	20	8
	Մարզային և համայնքային նշանակության մայրուղային փողոցներ և հրապարակներ	Նույնը	5	15	5
	Մարզային և համայնքային նշանակության զբոսայգիներ, պարտեզներ, պուրակներ, զբոսավայրեր և հետիոտն փողոցներ	Նույնը և բնապատկերի բնորոշ տարրեր	3	10	3
Գ	Տեղական նշանակության փողոցներ և հրապարակներ, հետիոտն ճանապարհներ	Հուշարձաններ և կոթողներ, տեսարժան շենքեր և կառուցվածքներ	5	10	3
	Տեղական նշանակության պարտեզներ, պուրակներ և զբոսավայրեր	Նույնը և բնապատկերի բնորոշ տարրեր	3	8	3

1. 300 մ-ից ավելի հեռավորության վրա շրջադիտվող գերիշխող օբյեկտների պայծառությունները թույլատրվում է մեծացնել մինչև 50%:
2. Լուսավորման օբյեկտը չլուսավորվող տարածության շրջափակման մեջ դասավորելիս պայծառության նորմը, բերված աղյուսակ 13-ում, թույլատրվում է փոքրացնել մինչև 50%-ով:

6.58 Ճարտարապետական լուսավորման կայանքներ նախագծելիս լուսավորվող օբյեկտների ճակատների մակերևույթների անդրադարձման հաշվարկային գործակիցներն ընդունվում են ըստ բնապայման չափումների, կամ ըստ աղյուսակ 21-ի:

Աղյուսակ 21 - Արտաքին ճարտարապետական լուսավորման նախագծման դեպքում կիրառվող շենքերի, կառուցվածքների, կոթողների ճակատների վերջնամշակման նյութերի և կանաչ ծառատունկերի հաշվարկային բնութագրերը

Մակերևույթի նյութերը կամ ճակատի գույնը	Մակերևույթի նյութի անդրադարձման միջին կշռային գործակիցը
ՄԴԻՏԱԿ. ճակատի մթնոլորտակայուն ներկեր, գիպս, կերամիկական սալիկ, աղյուս, փայլատ ալյումին, չժանգոտող պողպատ և այլն	0,7
ԲԱՑ. ներկեր, մարմար, սպիտակ քար (կրաքար, դոլոմիտ, ավազաքար), բետոն և դեկորատիվ սվաղներ սպիտակ ցեմենտով և բաց լցանյութերով, կերամիկական սալիկներ, սիլիկատային աղյուս, փայլատ լատուն, տրավերտին, խեցաքար և այլն	0,6
ՄԻՋԻՆ ԲԱՑ. ներկեր, մարմար, քար (տուֆ, ավազաքար, կրաքար), բետոն, գունավոր սվաղներ, կերամիկական աղյուս, բլոկներ, սալիկ, փայտ (տախտակներ) և այլն	0,5
ՄՈՒԳ. ներկեր, մարմար, գրանիտ, կավային աղյուս, դեկորատիվ սվաղներ և կերամիկական սալիկներ, մուգացած ծառ, պղինձ, ծառերի տերևներ և այլն	0,3
ՍԵՎ. ներկեր, քար (գաբրո, լաբրադորիտ, դիորիտ, բազալտ, գրանիտ), թուջ, պլաստինացված բրոնզ, դեկորատիվ սվաղներ, ծառերի փուշտերև և այլն	0,15

6.59 Ճակատի հավասարաչափ ողողվող լուսավորման դեպքում առավելագույն լուսավորվածության հարաբերությունը նվազագույնին պետք է լինի ոչ ավելի 3:1, իսկ ռելիեֆային և բազմագույն ճակատների վրա՝ մինչև 5:1: Ընդ որում, առավելագույն լուսավորվածությունը պետք է ստեղծվի հիմնական հորինվածքապլաստիկ տարրերի վրա:

6.60 Ճակատի անհավասարաչափ ողողվող լուսավորման դեպքում առավելագույն լուսավորվածության հարաբերությունը նվազագույնին լուսավորվող գոտու սահմաններում ընդունվում է ոչ պակաս 10:1 և ոչ ավելի 30:1, ընդսմին առավելագույն լուսավորվածությունը ստեղծվում է լույսով շեշտադրվող տարրի վրա:

6.61 Լուսային ճարտարապետական համակառույցներ նախագծելիս, ըստ աղյուսակ 20-ի ընդունվում է գերիշխող օբյեկտի գլխավոր ճակատի պայծառությունը: Միասնական համակառույցի համաստորադաս օբյեկտների լուսավորվող ճակատների միջին պայծառությունները պետք է, որպես կանոն, իջեցված լինեն ոչ պակաս, քան երկու աստիճանով:

6.62 Բազմակողմանի տեսադաշտ ունեցող ծավալային կոթողները, հուշարձանները, ճարտարապետական փոքր ձևերը պետք է լուսավորել երկու-երեք կողմով՝ հաշվարկային հարթությունը որոշող հստակ արտահայտված լուսային հոսքի հիմնական ուղղությամբ, որը հորինվածքորեն պետք է կապված լինի օբյեկտի ընկալման գլխավոր ուղղության հետ:

6.63 Ճարտարապետական լուսավորման կայանքներում պետք է օգտագործել լույսի պարպումային աղբյուրներ: Տեղական լուսավորման դեպքում թույլատրվում է շիկացման լամպերի, առավելապես հալոգեն, ինչպես նաև քրոմատիկ ճառագայթման գունավոր լուսազտիչների աղբյուրների կիրառություն:

6.64 Մակերևույթների գունային «սառը» երանգներ ունեցող օբյեկտների և կանաչ տնկուտների լուսավորման համար պետք է կիրառել 4000 կ-ից բարձր գունային ջերմաստիճանով լույսի պարպման աղբյուրներ: «Տաք» գույներով ներկված օբյեկտների լուսավորման համար կիրառվում են մինչև 3500 կ գունային ջերմաստիճանով լույսի աղբյուրներ: Բազմերանգ օբյեկտների, հատկապես ճակատների վրա դեկորատիվ-արտահայտչական տարրերի (խճանկարային և գեղանկարչական որմնապատկերներ և ծովորներ, հախճաասալիկներ, գունավոր ռելիեֆներ և քանդակներ, քերանկարներ և այլն) լուսավորման դեպքում պետք է կիրառել սպիտակ լույսի աղբյուրներ ոչ պակաս 80 լուսափոխանցման R_a ցուցիչով: Լանդշաֆտային ճարտարապետության օբյեկտների գեղարվեստադեկորատիվ լուսավորման դեպքում թույլատրվում է գունավոր լույսի աղբյուրների կիրառում:

6.65 Ճարտարապետական լուսավորման սարքերը պետք է դասավորված լինեն այնպես, որպեսզի դրանց ելքային անցքերը չկարողանան գտնվել երթևեկության գլխավոր ուղղություններում վարորդների և հետիոտնի կենտրոնական տեսողության դաշտում կամ էկրանավորվեն լուսապաշտպան սարքվածքներով:

6.66 Ճարտարապետական լուսավորման կայանքները նախագծելիս պաշարի գործակիցը պետք է ընդունվի կախված լուսավորման սարքի լուսային անցքի կողմնորոշումից և նրանում օգտագործվող լույսի աղբյուրներից՝ պարպումային լամպերի դեպքում $K_{\omega} = 1,5$, եթե սարքի ապակին կողմնորոշված է ուղղաձիգ կամ դեպի ներքևի կիսագունդը (անկյան 90° - 270° սահմաններում) և $K_{\omega} = 1,7$ ապակու դեպի վերին կիսագունդը կողմնորոշման դեպքում, և շիկացման լամպերի դեպքում՝ համապատասխանաբար $K_{\omega} = 1,3$ և $1,5$ »:

ՑՈՒՑԱՓԵՂԿԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ

6.67 Ցուցափեղկի ընդհանուր լուսավորման դեպքում ուղղաձիգ հարթության միջին լուսավորվածությունը մայթի մակարդակից 1,5 մ բարձրության վրա պետք է համապատասխանի աղյուսակ 22-ին: Շեշտադրող լուսավորման լուսավորվածությունը ընդհանուրի հետ գումարած չպետք է գերազանցի աղյուսակ 22-ում բերված մեծություններին:

Աղյուսակ 22

Փողոցի, հրապարակի կարգը	Ուղղաձիգ հարթությունում միջին լուսավորվածությունը, լք	Ուղղաձիգ հարթությունում գումարային լուսավորվածությունը (ընդհանուր և շեշտադրող լուսավորում), լք, ոչ ավելի
Ա	300	1000
Բ	200	750
Գ	100	500

1. Շեշտադրող լուսավորման մակերեսը պետք է կազմի ոչ ավելի ցուցափեղկի մակերեսի 20%:
 2. Ցուցափեղկերի համար, որտեղ ցուցադրվում են առավելապես մուգ ապրանքներ, լուսավորվածության մակարդակը կարող է բարձրացվել մեկ աստիճանով ըստ լուսավորվածության սանդղակի, բաց ապրանքներով ցուցափեղկերի համար լուսավորվածությունը կարող է իջեցվել մեկ աստիճանով:

6.68 Ցուցափեղկերը լուսավորելիս պետք է կիրառել լույսի պարպումային աղբյուրներով շիկացման հալոգենային լամպերով լուսավորման սարքեր: Լույսի աղբյուրներն ընտրվում են՝ հաշվի առնելով ըստ աղյուսակ 23-ի գունատարբերման պահանջները

Աղյուսակ 23 - Ցուցափեղկերի լուսավորման համար լույսի հանձնարարելի աղբյուրներ

Ապրանքի տեսակը	Լույսի աղբյուրի գունային բնութագրերը	
	T _g , K	R _a
Գործվածքներ, արդուզարդեղեն, օծանելիք, խաղալիքներ, գրքեր, կոշիկ, գլխարկներ, մորթիներ	2800-5000	80 և ավելի
Էլեկտրաապրանքներ, ամանեղեն-տնտեսական, գրասենյակային ապրանքներ, նպարեղեն, հաց	2800-3200	70 և ավելի
Մսի, կաթի, ուտելիղենի մթերքներ, բանջարեղեն, մրգեր, հրուշակեղեն	2800-3500	80 և ավելի
Ձկնամթերքներ	4000-6500	80 և ավելի

6.69 Լուսավորման սարքերը պետք է տեղակայված լինեն այնպես, որպեսզի դրանց էլքի անցքերը կամ ցուցադրված ապրանքներից ցուլքերը չընկնեն վարորդների և ցուցափեղկի ապակուց ոչ պակաս 1 մ հեռավորության վրա գտնվող հետիոտնի կենտրոնական տեսադաշտի վրա:

ԳՈՎԱԶՂԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ

6.70 Գովազդային պանելների և վահանների հանձնարարելի ու ամենամեծ թույլատրելի միջին պայծառությունը, ինչպես նաև առանձին հատվածների առավելագույն թույլատրելի պայծառությունը, կախված դրանց մակերեսից և վարորդների աչքի նկատմամբ դասավորվածությունից, բերված են աղյուսակ 24-ում: Առավելագույն պայծառությունը որոշվում է որպես եզրաչափային (0,2x0,2) մ² մակերեսով ամենից ավելի պայծառ հատվածների համար ինչպես գովազդային պանելներում, որոնցում լույսի աղբյուրները դասավորված են լուսացրող նյութերից պաշտպանակների ներսում, այնպես էլ արտաքինից լուսային սարքերով լուսավորվող գովազդային վահաններում:

Աղյուսակ 24 - Գովազդային պանելների և վահանների պայծառության նորմերը

Գովազդային պանելի կամ վահանի դասավորությունը	Օբյեկտի մակերեսը, S, մ ²	Օբյեկտի տեղակայման բարձրությունը, h*, մ	Գովազդային պանելի կամ վահանի պայծառությունը, կր/մ ² փողոցի կարգի դեպքում								
			Ա			Բ			Գ		
			միջին հանձնարարելի	ամենամեծ թույլատրելի	առավելագույնը**	միջին հանձնարարելի	ամենամեծ թույլատրելի	առավելագույնը**	միջին հանձնարարելի	ամենամեծ թույլատրելի	առավելագույնը**
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Փողոցի առանցքին լայնակի երթևեկելի մասից դուրս օբյեկտի S, մ ² մակերեսի և երթևեկելի մասից, h, մ, բարձրության դեպքում	S<2	<2***	75	150	1000	50	125	750	30	100	500
	2<S<6 6<S<12 S>12 ցանկացած	>3,5	100	250	1500	75	200	1000			
		>3,5	75	200	1000	50	125	750			
			75	150	1000	50	85	750			
			75	125	750	50	75	500			
	>5	75	125	500	50	100	400				
Փողոցի առանցքի ուղղությամբ, ինչպես նաև շենքի ճակատի կամ տանիքածածկի վրա՝ գովազդային օբյեկտի ցանկացած կողմնորոշման դեպքում	ցանկացած	>3	200	500	2500	150	400	2000	100	300	750

* Բարձրությունը համարվում է երթևեկելի մասի մակարդակից մինչև գովազդային օբյեկտի ստորին եզրը:
 ** Առավելագույն պայծառությունը օբյեկտի ամենից առավել պայծառ տեղում որոշվում է որպես եզրաչափային $(0,2 \times 0,2)$ մ² մակերեսով հատվածի համար:
 *** Գովազդային օբյեկտները 2 մ-ից ավելի փոքր բարձրության վրա տեղակայելիս եզրաչափից մինչև օբյեկտի մերձակա կողմերը հեռավորությունը պետք է լինի 2 մ-ից ավելի:

6.71 Բնակելի և առողջարանային շենքերի, հիվանդասենյակների ճարտարապետական, գովազդային և արտաքին լուսավորման սարքերով պատուհանների գումարային լուսավորման մակարդակները չպետք է լինեն ավելի մեծ 6.45-ում ցույց տրված միջին ուղղածիզ լուսավորվածության մեծություններից»:

32) Փոխարինել կետերի համարները՝ 6.60-ը 6.72-ով, 6.61-ը 6.73-ով, 6.62-ը 6.74-ով, 6.63-ը 6.75-ով, 6.64-ը 6.76-ով, 6.65-ը 6.77-ով, 6.66-ը 6.78-ով, 6.67-ը 6.79-ով, 6.68-ը 6.80-ով:

33) 6.78-րդ կետը լրացնել հետևյալ պարբերությամբ.
 «Վթարային լուսավորման կանթեղները պետք է տարբերվեն աշխատանքային լուսավորման կանթեղներից կարմիր գույնի հատուկ գծանշած Ա տառով»:

34) «Վթարային (անվտանգության և էվակուացման լուսավորում), պահնորդական և հերթապահ լուսավորում» ենթաբաժինը լրացնել 6.81 կետով.

«6.81 Անվտանգության նշանների լուսավորումը կատարվում է համապատասխան ազգային նորմերի պահանջներին»:

35) Ա հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություններով՝
Տրանսպորտային թունելների «Համաչափ լուսավորման համակարգ»-լուսավորման համակարգ՝ երթևեկելի մասի առանցքին զուգահեռ հարթության վրա համաչափ լուսաբաշխման ջահերի պատի կամ առաստաղի վրա տեղաբաշխմամբ:

Տրանսպորտային թունելների «Հանդիպական լուսավորման համակարգ»-լուսավորման համակարգ՝ երթևեկելի մասի առանցքին զուգահեռ հարթության վրա անհամաչափ լուսաբաշխման ջահերի, որպես կանոն, առաստաղի վրա տեղաբաշխմամբ, որոնց լուսային հոսքի զգալի մասն ուղղված է տրանսպորտի երթևեկության ընդառաջ:

Շեշտադրող լուսավորում-ավելի քիչ լուսավորված ֆոնի վրա առանձին մանրամասերի լույսով զատում:
Լրացուցիչ արհեստական լուսավորում-լուսավորում, որն օգտագործվում է աշխատանքային օրվա ընթացքում ոչ բավական բնական լուսավորմամբ գոտիներում:

Ողողող լուսավորում-շենքի կամ կառուցվածքի ամբողջ ճակատի կամ դրա էական մասի լուսային սարքերով ընդհանուր (հավասարաչափ կամ անհավասարաչափ) լուսավորում:

Տեղային լուսավորում-շենքի կամ կառուցվածքի մասի, ինչպես նաև առանձին ճարտարապետական տարրերի լուսավորում՝ ողողող լուսավորման բացակայության դեպքում:

36) «**ԲԼԳ-ի հաշվարկային արժեք e_n** » հասկացության սահմանումը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
 «**ԲԼԳ-ի հաշվարկային արժեք e_n** » սենքերի բնական կամ համատեղված լուսավորման նախագծման դեպքում հաշվարկման միջոցով ստացվող արժեք: Արտահայտվում է տոկոսներով և որոշվում է.
 ա) կողային լուսավորման դեպքում ըստ բանաձևի.

$$e_n^l = \left(\sum_{i=1}^L \varepsilon_{li} q_i + \sum_{i=1}^M \varepsilon_{ci} b_{ci} k_{ci} \right) \tau_o / k_{\omega}, \quad (U.5)$$

բ) վերին լուսավորման դեպքում ըստ բանաձևի.

$$e_n^u = \left(\sum_{i=1}^T \varepsilon_{li} + \varepsilon_{\omega} (r_z k_b (-1)) \right) \tau_o / k_{\omega}, \quad (U.6)$$

գ) համակցած (վերին և կողային) լուսավորման դեպքում ըստ բանաձևի.

$$e_n^h = e_n^l + e_n^u, \quad (U.7)$$

որտեղ՝
 L - հաշվարկային կետից լուսային բացվածքի միջոցով տեսանելի երկնակամարի հատվածների քանակն է,
 ε_{li} - կողային լուսավորման դեպքում հաշվարկային կետում երկնքի i-րդ հատվածը ուղղակի լույսը հաշվի առնող երկրաչափական ԲԼԳ-ն է,

q_i - LUՀ-ի ամպամած երկնքի i -րդ հատվածի անհավասարաչափ պայծառությունը հաշվի առնող գործակից,
 M - հաշվարկային կետից լուսային բացվածքի միջով տեսանելի դիմակակառուցապատման շենքերի ճակատների հատվածների քանակն է.

ε_{c_j} - դիմակակառուցապատման շենքերի ճակատների j -րդ հատվածից անդրադարձող լույսը հաշվի առնող երկրաչափական ԲԼԳ-ն է հաշվարկային կետում, կողային լուսավորման դեպքում,

b_{δ_j} - դիմակակառուցապատման շենքերի ճակատների j -րդ հատվածի միջին հարաբերական պայծառությունն է,
 r_o - կողային լուսավորման դեպքում սենքի և շենքին հարող ենթաշերտի մակերևույթներից անդրադարձող լույսի շնորհիվ ԲԼԳ-ի մեծացումը հաշվի առնող գործակից է,

K_{c_i} - դիմակաշենքերի առկայության դեպքում ԲԼԳ-ի ներքին անդրադարձման բաղադրիչի փոփոխությունները հաշվի առնող գործակից է, որոշվում է ըստ բանաձևի.

$$K_{c_i} = 1 + (K_{c_{i-1}} - 1) \cdot \frac{\sum_{j=1}^M \varepsilon_{c_j}}{\sum_{i=1}^N \varepsilon_{l_i} + \sum_{j=1}^M \varepsilon_{c_j}}, \quad (U.8)$$

որտեղ՝
 $K_{c_{i-1}}$ - հաշվարկային կետից տեսանելի շենքերով երկնականարի լրիվ փակման դեպքում սենքում ԲԼԳ-ի ներքին անդրադարձման բաղադրիչի փոփոխությունները հաշվի առնող գործակիցն է.

τ_o - լուսաթողանցման ընդհանուր գործակից է, որոշվում է ըստ բանաձևի.

$$\tau_o = \tau_1 \tau_2 \tau_3 \tau_4 \tau_5, \quad (U.9)$$

որտեղ՝
 τ_1 - նյութի լուսաթողանցման գործակիցն է.
 τ_2 - լուսաբացվածքների ապակեկալներում լույսի կորուստները հաշվի առնող գործակիցն է: Լուսաբացվածքի չափերը ընդունվում են հավասար ապակեկալի շրջանակի ըստ արտաքին չափագրման չափերի.
 τ_3 - կողո կոնստրուկցիաներում լույսի կորուստները հաշվի առնող գործակիցն է (կողային լուսավորման դեպքում $\tau_3=1$).
 τ_4 - արևապաշտպան սարքվածքներում լույսի կորուստները հաշվի առնող գործակիցն է
 τ_5 - երդիկների տակ տեղակայվող պաշտպանիչ ցանցերում լույսի կորուստները հաշվի առնող գործակիցն է, ընդունվում է հավասար 0,9.

K_{ω} - պաշարի գործակիցն է, որոշվում է ըստ աղյուսակ 3-ի.
 T - վերնածածկում լուսաբացվածքների քանակն է.
 ε_{l_i} - հաշվարկային կետում երկրաչափական ԲԼԳ-ն է LUՀ-ի ամպամած երկնքից i -րդ բացվածքից վերին լուսավորման դեպքում.

ε_{δ} - երկրաչափական ԲԼԳ-ի միջին արժեքն է վերին լուսավորման դեպքում պայմանական աշխատանքային մակերևույթի և սենքի բնորոշ ուղղածից հատվածքի հարթության փոփոխման գծի վրա, որոշվում է հարաբերությունից.

$$\varepsilon_{\delta} = 1/N \sum_{i=1}^N \varepsilon_{l_i}, \quad (U.10)$$

N - հաշվարկային կետերի քանակն է:»:
 U հավելվածը լրացնել սահմանումով.
 «ԲԼԳ-ի միջին արժեքը e_{δ} վերին կամ համակցված լուսավորման դեպքում որոշվում է ըստ բանաձևի.

$$e_{\delta} = \frac{1}{N-1} \left(\frac{e_1 + e_N}{2} + \sum_{i=2}^{N-1} \varepsilon_i \right), \quad (U.11),$$

որտեղ՝
 e_1 և e_N - ԲԼԳ-ի արժեքներն են վերին կամ համակցված լուսավորման դեպքում սենքի բնորոշ հատվածքի առաջին և վերջին կետերում.
 e_i - ԲԼԳ-ի արժեքներն են սենքի բնորոշ հատվածքի մնացած կետերում ($i=2, 3, \dots, N-1$),
 r_2 - վերին լուսավորման դեպքում սենքի մակերևույթից անդրադարձող լույսի շնորհիվ ԲԼԳ-ի մեծացումը հաշվի առնող գործակիցն է.
 K_5 - երդիկի տիպը հաշվի առնող գործակիցն է:»:

37) Հավելված Թ-ն շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Հավելված Թ

Աղյուսակ Թ 1 -Հասարակական, բնակելի, օժանդակ շենքերի հիմնական սենքերի լուսավորման նորմավորվող ցուցանիշները

Սենքեր	Լուսավոր-վածության նորմավորման հարթության (h-հորիզոնական, Ու-ուղղաձիգ/ և ԲԼԳ, հարթության բարձրությունը հատակից, մ	Տեսողական աշխատանքի կարգը և ենթակարգը	Արհեստական լուսավորում					Բնական լուսավորում		Համատեղված լուսավորում	
			Աշխատանքային լուսավորվածությունը, լք		Գլաածև լուսավորվածություն, լք	Անհարվետու- լյան ցուցանիշը, ոչ ավելի	Լուսավորվածության բաբախման գործակիցը, % ոչ ավելի	ԲԼԳ պն, %		Համատեղված ԲԼԳ պն, %	
			համակցված լուսավորման դեպքում	ընդհանուր լուսավորման դեպքում				վերին կամ համակցված լուսավորման դեպքում	կողային լուսավորման դեպքում	վերին կամ համակցված լուսավորման դեպքում	կողային լուսավորման դեպքում
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Վարչական շենքեր											
1 Առանձնասենյակներ և աշխատասենյակներ	h-0,8	Բ-1	400/200	300	-	40	15	3,0	1,0	1,8	0,6
2 Նախագծային դահլիճներ և սենյակներ, կոնստրուկտորական, գծագրական բյուրոներ	h-0,8	Ա-1	600/400	500	-	40	10	4,0	1,5	2,4	0,9
3 Գրապահոցներ և արխիվներ, բաց մուտքի ֆոնդի սենքեր	Ու-1,0 (դարակաշարերի վրա)	-	75	-	-	-	-	-	-	-	-
4 Մանրակերտի, ատաղձագործական և նորոգման արհեստանոցներ	h-0,8, դազգահների և աշխատանքային սեղանների վրա	IIIգ	750/200	300	-	40 ¹⁾	15/20	-	-	3,0	1,2
5 Ցուցասարքերի տեսատերմինայների հետ աշխատելու համար սենքեր, ցուցասարքերի դահլիճներ	Ու-1,2 (ցուցասարքի էկրանի վրա)	Բ-2	-	200	-	-	-	-	-	-	-
6 Դահլիճներ	h-0,8	Դ	-	300	75	60	20	2,5	0,7	1,5	0,4
7 Ընթերցասրահներ	h-0,8	Ա-2	500/300	400	150	40	15	3,5	1,2	2,1	0,7
8 Կողասրահներ (ձեմասրահներ), Լաբորատորիաներ, օրգանական և անօրգանական քիմիայի, ջերմային, ֆիզիկական, սպեկտրագրական, սպեկտրաչափական (պոլյատի), լուսաչափական, մանրադիտակային, շենտգենակառուցվածքային վերլուծության, մեխանիկական և ռադիոչափողական, էլեկտրոնային սարքվածքների, պատրաստուկագործային	հատակ h-0,8	Զ Ա-1	- 500/300	150 400	50 -	90 40	- 10	- 3,5	- 1,2	- 2,1	- 0,7
9 Վերլուծական լաբորատորիաներ	h-0,8	Ա-1	600/400	500	-	40	10	4,0	1,5	2,4	0,9
Բանկային ապահովագրական հիմնարկներ											
10 Գործոյթի դահլիճ, վարկային խումբ, դրամարկային դահլիճ, սենքեր գումարի վերահաշվման համար	h-0,8 աշխատասեղանների վրա	Ա-2	500/300	400	-	15	10	3,5	1,2	2,1	0,7
Ընդհանուր կրթության, տարրական, միջին և բարձրագույն մասնագիտական կրթության հիմնարկներ											
11 Դասասենյակներ, լսարաններ, ուսումնական աշխատասենյակներ, հանրակրթական դպրոցների, դպրոց-ինտերնատների, միջին մասնագիտական և պրոֆեսիոնալ-տեխնիկական հիմնարկների լաբորատորիաներ	Ու-1,5 գրատախտակի մեջտեղում h-0,8 աշխատասեղաններ ի, դպրոցական նստարանների վրա	Ա-1 Ա-2	- -	500 400	- -	- 40	10 10	- 4,0 ²⁾	- 1,5 ²⁾	- 2,1	- 1,3
12 Լսարաններ, ուսումնական աշխատասենյակներ, լաբորատորիաներ տեխնիկումներում և քառօձառուն ուսումնական	h-0,8 աշխատասեղանների և նստարանների վրա	Ա-2	-	400	-	40	10	3,5	1,2	2,1	0,7

հաստատություններում												
13 Տեղեկագիտության և հաշվողական տեխնիկայի աշխատանքներ	Ու-1,0 (ցուցասարքի էկրանի վրա)	Բ-2	-	200	-	-	-	-	-	-	-	-
	հ-0,8 աշխատասեղանների և նստարանների վրա	Ա-2	500/300 0	400	-	15	10	3,5	1,2	2,1	0,7	
14 Տեխնիկական գծագրության և նկարչության աշխատասեղաններ	Ու-գրատախտակի վրա	Ա-1	-	500	-	40	10	-	-	-	-	
	հ-0,8 աշխատասեղանների և նստարանների վրա	Ա-1	-	500	-	40	10	4,0	1,5	2,1	1,3	
15 Մետաղների և փայտանյութի մշակման արհեստանոց	հ-0,8 դազգահների և աշխատասեղանների վրա	IIIբ	1000/200	300	-	40 ¹⁾	15	-	-	3,0	1,2	
16 Աղջիկների համար աշխատանքի սպասարկող տեսակների աշխատասեղաններ	հ-0,8	Ա-2	-	400	-	40	10	4, ⁰²⁾	1,5 ²⁾	2,1	1,3	
17 Սպորտային դահլիճներ	հ-0,0, հատակ	Բ-2	-	200	-	60	20	2,5 ²⁾	0,7 ²⁾	1,5	0,4	
	Ու-հատակից 2,0 մ մակարդակի վրա երկու կողմից սենքի երկայնական առանցքի վրա	-	75	-	-	-	-	-	-	-	-	
18 Ծածկած լողավազաններ	հ-ջրի մակերևույթը	Գ-1	-	150	-	60	20	2,0	0,5	1,5	0,4	
19 Հանդիսարաններ, կինոլսարաններ	հ-0,0	Ե	-	200	75	90	-	-	-	-	-	
20 Հանդիսարանների բեմահարթակներ	Ու-1,5	Դ	-	300	-	-	-	-	-	-	-	
21 Դասարանների առանձնասեղաններ և սենյակներ	հ-0,8	Բ-1	-	300	-	40	15	3,0	1,0	1,8	0,6	
22 Հանգստասեղաններ	հատակ, հ-0,0	Զ	-	150	-	90	-	2,0	0,5	1,2	0,3	
Ժամանցային նշանակության հիմնարկներ												
23 Բազմանպատակային նշանակության դահլիճներ	հ-0,8	Ա-2	-	400	100	40	10	-	-	-	-	
24 Թատրոնների հանդիսադահլիճներ, համերգային դահլիճներ	հ-0,8	Դ	-	300	100	60	-	-	-	-	-	
25 Ակումբների հանդիսադահլիճներ, ակումբ-հյուրասեղակ, սենքեր ժամանցի պարապմունքների, ժողովների համար, թատրոնների ձեռնարաններ	հ-0,8	Ե	-	200	75	90	-	-	-	-	-	
26 Ցուցահանդեսի դահլիճներ	հ-0,8	Ե	-	2003 ³⁾	75	90	-	2,5	0,7	1,5	0,4	
27 Հանդիսադահլիճներ	հ-0,8	Ե-1	-	75	-	90	-	-	-	-	-	
28 Կինոթատրոնների ակումբների ձեռնարաններ	հատակ, հ-0,0	Զ	-	150	50	90	-	-	-	-	-	
29 Խմբակների սենյակներ, երաժշտական դասարաններ	հ-0,8	Բ-1	-	300	-	60	20	3,0	1,0	1,8	0,6	
30 Կինո-, ծայնա-, լուսասրահներ	հ-0,8	Գ-1	-	150	-	60	20	-	-	-	-	
Մանկական նախադպրոցական հիմնարկներ												
31 Ընդունարաններ	հատակ, հ-0,0	Բ-2	-	200	-	25	15	-	-	-	-	
32 Հանդերձարաններ	հատակ, հ-0,0	Բ-2	-	200	-	60	15	2,5	0,7	1,5	0,4	
33 Խմբակային խաղասեղաններ, ճաշարաններ, երաժշտական և գիմնազիայի պարապմունքների սենյակներ	հատակ, հ-0,0	Ա-2	-	400	-	15	10	4,0 ⁰²⁾	1,5 ²⁾	-	-	
34 Ննջարաններ	հատակ, հ-0,0	Գ-2	-	150	-	25	15	2,0	0,5	-	-	
35 Մեկուսարաններ, սենյակներ հիվանդացած երեխաների համար	հատակ, հ-0,0	Բ-2	-	200	-	25	15	2,0	0,5	-	-	
Առողջարաններ, հանգստյան տներ												
36 Հիվանդասեղաններ, ննջասեղաններ	հատակ, հ-0,0	Գ-2	-	100	-	25	15	2,0	0,5	-	-	
Ֆիզկուլտուրաառողջարանային հիմնարկներ												

37 Սպորտային խաղերի դահլիճներ												
	h-0,0	Բ-2	-	200	-	60	20	3,0	1,0	1,8	0,6	
	Ու-2,0 սենքի երկայնական առանցքի վրա երկու կողմից	-	-	75	-	-	-	-	-	-	-	
38 Լողավազանի դահլիճ	h-ջրի մակերևույթ	Գ-1	-	150	-	60	20	2,0	0,5	1,2	0,3	
Հասարակական սննդի կազմակերպություններ												
39 Ռեստորանների, ճաշարանների ճաշարահներ	h-0,8	Բ-2	-	200	-	60	20	-	-	-	-	
40 Բաշխիչներ	h-0,8	Բ-1	-	300	-	40	15	-	-	-	-	
41 Տաք արտադրամասեր, սառը արտադրամասեր, վերջնապատրաստման և նախապատրաստման արտադրամասեր	h-0,8	Բ-2	-	200	-	60	20	-	-	1,2	0,3	
42 Խոհանոցային և ճաշարանային ամանեղենի վկացման սենքեր, հացի կտրման համար սենքեր, արտադրության պետի սենք	h-0,8	Բ-2	-	200	-	60	20	-	-	1,5	0,4	
Խանութներ												
43 Առևտրային դահլիճներ. գրքի, պատրաստի հագուստի, սպիտակեղենի, կոշիկեղենի, կտորեղենի, մորթե իրերի, գլխարկների, օժանելիքի, արդուզարդի ապրանքների, ակնեղենի, էլեկտրառադիոապարատների, առանց ինքնասպասարկման պարենի խանութների	h-0,8	Բ-1	-	300	100	40	15	-	-	-	-	
ինքնասպասարկմամբ պարենի խանութների առևտրային դահլիճներ	h-0,8	Ա-2	-	400	100	40	10	-	-	-	-	
44 Առևտրային դահլիճներ. ամանեղենի, կահույքի, սպորտային ապրանքների, շինանյութերի, էլեկտրակենցաղային մեքենաների, խաղալիքների և գրասենյակային ապրանքների խանութներ	h-0,8	Բ-2	-	200	75	60	20	-	-	-	-	
45 Չափափորձման խցիկներ	Ու-1,5	Բ-1	-	300	-	-	20	-	-	-	-	
46 Պատվերների բաժինների, սպասարկման բյուրոների սենքեր	h-0,8	Բ-1	-	200	-	60	20	-	-	-	-	
47 Գլխավոր դրամարկղների սենքեր	h-0,8	Բ-1	-	300	-	40	15	-	-	1,8	0,6	
Բնակչության կենցաղային սպասարկման կազմակերպություններ												
48 Բաղնիքներ.												
ա) սպասարաններ, հովանավու սենքեր	h-0,8	Գ-1	-	150	-	90	-	-	-	-	-	
բ) հանդերձարաններ, վկացարաններ, ցնցողարաններ, շոգեբաղնիքներ	հատակ, h-0,0	Է-1	-	75	-	-	-	-	-	-	-	
գ) ավազաններ	հատակ, h-0,0	Գ-2	-	100	-	-	-	-	-	-	-	
49 Վարսավիրանոցներ	h-0,8	Ա-2	500/300	400	-	40	10/15	-	-	2,1	0,7	
50 Լուսանկարչություններ												
ա) պատվերների ընդունման և հանձնման սրահներ	h-0,8	Բ-2	-	200	-	60	20	-	-	1,5	0,4	
բ) լուսաարիեստանոցի նկարահանման դահլիճ	h-0,8	Գ-2	-	100	-	-	20	-	-	-	-	
գ) լուսալաբորատորիաներ, լուծույթների պատրաստման և արժաթի վերարտադրման սենքեր	h-0,8	Բ-2	-	200	-	60	20	-	-	-	-	
դ) սենքեր ռետուշի համար	h-0,8	IIIբ	1000/200	-	-	40 ¹⁾	15/20	-	-	-	-	
51 Լվացքատներ												
ա) սպիտակեղենի ընդունման և հանձնման բաժանմունքներ. ընդունումը նիշով և հաշվառում, հանձնում սպիտակեղենի պահում	h-0,8 Ու-1,0	Բ-2 VIIIբ	- -	200 75	- -	60 -	20 -	- -	- -	1,5 -	0,4 -	

բ) վվածքի բաժանմունքներ. վվացում, լուծույթի պատրաստում վվացքի նյութերի պահում	հատակ, հ-0,0 հ-0,8	VI VIIIգ	- -	200 50	- -	40 ¹) -	20 -	- -	- -	- -	- -
գ) չորացման-արդուկման բաժանմունքներ. մեխանիկական ծեռքի	հ-0,8 հ-0,8	VI IVա	- -	200 300	- -	40 ¹) 40 ¹)	20 20	- -	- -	1,8 2,4	0,6 0,9
դ) սպիտակեղենի ջրկման և փաթեթավորման բաժանմունքներ	հ-0,8	VI	-	200	-	40 ¹)	20	-	-	1,8	0,6
ե) սպիտակեղենի նորոգում	հ-0,8	IIա	2000/750	750	-	20 ¹)	10/20	-	-	4,2	1,5
52 Ինքնասպասարկման վվացքատներ	հատակ, հ-0,0	Բ-2	-	200	-	60	20	-	-	1,5	0,4
53 Հագուստի քիմիական մաքրման արհեստանոց.											
ա) հագուստի ընդունման և հանձնման սրահ	հ-0,8	Բ-2	-	200	-	60	20	-	-	1,5	0,4
բ) քիմիական մաքրման սենքեր	հ-0,8	VI	-	200	-	40 ¹)	20	-	-	1,8	0,6
գ) բծերի հանման բաժանմունքներ	հ-0,8	IIIա	2000/200	500	-	40 ¹)	15/20	-	-	-	-
դ) սենքեր քիմիկատների պահման համար	հ-0,8	VIIIգ	-	50	-	-	-	-	-	-	-
54 Հագուստի և հյուսվածքեղենի պատրաստման և նորոգման արհեստանոց											
ա) կարի արտադրամասեր	հ-0,8 աշխատանքային սեղանների վրա	IIա	2000/750 ⁴)	750	-	20 ¹)	10/20	-	-	4,2	1,5
բ) ձևման բաժանմունքներ	հ- 0,8աշխատանքային սեղանների վրա	IIբ	-	750	-	20 ¹)	10	-	-	4,2	1,5
գ) հագուստի նորոգման բաժանմունքներ	հ-0,8	IIա	2000/750 ⁴)	750	-	20 ¹)	10/20	-	-	4,2	1,5
դ) կիրառվող նյութերի նախապատրաստման բաժանմունքներ	հ-0,8	IVա	-	300	-	40 ¹)	20	-	-	2,4	0,9
ե) ձեռքի և մեքենայական հյուսման բաժանմունքներ	հ-0,8	IIգ	-	500	-	20 ¹)	10	-	-	4,2	1,5
զ) արդուկարաններ, շոգեմշակարաններ	հ-0,8	IVա	-	300	-	40 ¹)	20	-	-	2,4	0,9
55 Վարձույթի կետեր											
ա) սենքեր հաճախորդների համար	հ-0,8	Բ-2	-	200	-	60	20	-	-	1,5	0,4
բ) պահեստանոցներ	հ-0,8	Գ-1	-	150	-	-	-	-	-	-	-
56 Նորոգման արհեստանոցներ.											
ա) գլխարկների պատրաստում և նորոգում, մուշտակագործական աշխատանքներ	հ-0,8	IIա	2000/750 ⁴)	750	-	20 ¹)	10/20	-	-	4,2	1,5
բ) կոշկեղենի, արդուգործեղենի, մետաղյա պատրաստվածքների, պլաստմասսայից պատրաստվածքների, կենցաղային էլեկտրասարքերի նորոգում	հ-0,8	IIIա	2000/300 ⁴)	-	-	40 ¹)	10/15	-	-	3,0	1,2
գ) ժամացույցների նորոգում, ոսկերչական և փորագրման աշխատանքներ	հ-0,8	IIբ	3000/300	-	-	20 ¹)	10/20	-	-	4,2	1,5
դ) լուսա-, կինո-, ռադիո- և հեռուստասարքերի նորոգում	հ-0,8	IIգ	2000/200	-	-	20 ¹)	10/20	-	-	4,2	1,5
57 Չայնագրման ստուդիա.											
ա) սենքեր ձայնագրման և ունկնդրման համար	հ-0,8	Բ-2	-	200	-	60	20	-	-	-	-
բ) ձայնադարաններ	հ-0,8	Բ-2	-	200	-	-	-	-	-	-	-
Հյուրանոցներ											
58 Սպասարկման բյուրո	հ-0,8	Բ-2	-	200	-	60	20	-	-	1,5	0,4
59 Հերթապահ սպասարկող անձնակազմի սենքեր	հ-0,8	Բ-2	-	200	-	60	20	-	-	1,5	0,4
60 Հյուրասենյակներ, համարներ	հ-0,0	Գ-1	-	150	-	-	20	2,0	0,5	-	-
Բնակելի տներ, հանրակացարաններ											

61 Բնակելի սենյակներ, հյուրասենյակներ, ննջասենյակներ	հատակ, հ-0,0	Գ-1	-	150 ^{ա)}	-	-	-	2,0	0,5	-	-
62 Խոհանոցներ	հատակ, հ-0,0	Գ-1	-	150 ^{ա)}	-	-	-	2,0	0,5	1,2	0,3
63 Միջանցքներ, լոգարաններ, զուգարաններ	հատակ, հ-0,0	Է-2	-	150 ^{ա)}	-	-	-	-	-	-	-
64 Համատնային սենյակներ											
ա) նախասրահներ	հատակ, հ-0,0	Ը-1	-	30	-	-	-	-	-	-	-
բ) ըստ հարկերի միջանցքներ և վերելակների սրահներ	հատակ, հ-0,0	Ը-2	-	20	-	-	-	-	-	-	-
գ) սանդուղքներ և սանդղախարթակներ (աստիճաններ)	հատակ (հարթակներ)	Ը-2	-	20 ⁴⁾	-	-	-	-	-	-	-
Օժանդակ շենքեր և սենյակներ											
65 Սանիտարակենցաղային սենյակներ											
ա) լվացասենյակներ, զուգարաններ, ծխարաններ	հատակ	Է-2	-	75	-	-	-	-	-	-	-
բ) ցնցուղարաններ, հանդերձարաններ, սենյակներ հագուստի և կոշիկների չորացման, փոշեգերծման և վնասագերծման համար, սենյակներ աշխատողների տաքանալու համար	հատակ	Է-2	-	50	-	-	-	-	-	-	-
66 Առողջակետեր											
ա) ասպասարաններ	հ-0,8	Բ-2	-	200	-	60	20	-	-	1,5	0,4
բ) մատենավարական բաժին, հերթապահ անձնակազմի սենյակներ	հ-0,8	Բ-2	-	200	-	60	20	-	0,7	1,5	0,4
գ) բժիշկների առանձնասենյակներ, վիրակապարաններ	հ-0,8	Բ-1	-	300	-	40	15	3,0	1,0	1,8	0,6
դ) պրոցեդուրային աշխատասենյակներ	հ-0,8	Ա-1	-	500	-	40	10	4,0	1,5	2,4	0,9
Արտադրական, օժանդակ և հասարակական շենքերի այլ սենյակներ											
67 Նախասրահներ և դրսի հագուստի հանդերձարաններ.											
ա) բուհերում, դպրոցներում, թատրոններում, ակումբներում, հանրակացարաններում, հյուրանոցներում և խոշոր արդյունաբերական կազմակերպությունների ու հասարակական շենքերի գլխավոր մուտքերում	հատակ	Զ	-	150	-	-	-	-	-	1,2	0,3
բ) այլ արդյունաբերական օժանդակ և հասարակական շենքերում	հատակ	Է-1	-	75	-	-	-	-	-	-	-
68 Սանդուղքներ											
ա) հասարակական, արտադրական և օժանդակ շենքերի գլխավոր սանդղավանդակներ	հատակ (հարթակներ, աստիճաններ)	Գ-2	-	100	-	-	-	-	-	-	0,2 ⁴⁾
բ) մնացած սանդղավանդակներ	հատակ, հ-0,0	Է-2	-	50	-	-	-	-	-	-	0,1 ⁴⁾
69 Վերելակային սրահներ հասարակական, արտադրական և օժանդակ շենքերում	հատակ, հ-0,0	Է-2	-	75	-	-	-	-	-	-	-
70 Միջանցքներ և անցումներ											
ա) գլխավոր միջանցքներ և անցումներ	հատակ, հ-0,0	Է-1	-	75	-	-	-	-	-	-	-
բ) բնակելի շենքերի միջանցքներ ըստ հարկերի	հատակ, հ-0,0	Ը-2	-	20	-	-	-	-	-	-	-
գ) մնացած միջանցքներ	հատակ, հ-0,0	Է-2	-	50	-	-	-	-	-	-	-
71 Վերելակների մեքենայական բաժանմունքներ	հ-0,8	Ը-1	-	30 ⁵⁾	-	-	-	-	-	-	0,1 ⁴⁾
72 Չեղնահարկեր	հատակ, հ-0,0			10 ^{4);5)}							0,1 ⁴⁾

1) Բերված է կուրսային զուգանիշը

- 2) ԲԼԳ-ի նորմավորվող արժեքները բարձրացված են երեխաների և դեռատիներին աշխատանքի և ուսուցման համար հատուկ նախանշված սենքերում
- 3) բնակելի տներում և բնակարաններում լուսավորվածության բերված արժեքները համարվում են հանձնարարելի
- 4) նորմավորվող արժեքները սահմանված են փորձագիտական գնահատականի հիման վրա
- 5) լուսավորվածության նորմը տրված է շիկացման լամպի համար
- 1 Արհեստական լուսավորման երկու համակարգի սյունակներում լուսավորվածության նորմավորվող արժեքների առկայությունը ցույց է տալիս այդ համակարգերից մեկի կիրառման հնարավորությունը:
- 2 Առյուսակի 4 սյունակում բերված լուսավորվածության կոտորակային նշանակման դեպքում համարիչում ցույց է տրված լուսավորվածության նորմը աշխատանքային տեղում ընդհանուր և տեղական լուսավորումից, իսկ հայտարարում լուսավորվածությունը ընդհանուր լուսավորվածությունից ըստ սենքի:
- 3 Առյուսակի 7-րդ սյունակում բերված ապաքարեհարմարության ցուցանիշի կոտորակային նշանակման դեպքում համարիչում ցույց է տրված ընդհանուր լուսավորման համար նորմը համակցված լուսավորման համակարգում, իսկ հայտարարում մեկ ընդհանուր լուսավորման համակարգի համար:
- 4 Առյուսակի 8-րդ սյունակում բերված բաբախման գործակցի կոտորակային նշանակման դեպքում համարիչում ցույց է տրված տեղական լուսավորման կամ մեկ ընդհանուր լուսավորման համար, իսկ հայտարարում ընդհանուր լուսավորման համար համակցված համակարգում